

Ռ. Խաչատրյան. Քանդակագործ Վ. Պետրոսյանի դիմանկարը (1978, մասնավոր հավաքածու, Երևան)

ված ցուցահանդեսում «Կոմիտաս»-ի համար՝ ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության առաջին մրցանակի: Աշխատանքներից են՝ «Երիտասարդություն» (1965), «Մայրություն» (1965), «Նատյուրմորտով Մարիամիկը» (1972):

ԽԱՉԱՏՐՅԱՆ Սուսաննա Սեդրակի (ծն. 13.4.1909, Երևան), խաղողագործ-սելեկցիոներ, կենսաբանական գիտ. դոկտոր (1965): ՍՄԿԿ անդամ 1947-ից: Ավարտել է Երևանի համալսարանի գյուղատնտ. ֆակուլտետը (1930): 1938—49-ը աշխատել է ՀՍՍՀ ԳԱ բույսերի գենետիկայի, 1949-ից՝ խաղողագործության, գինեգործության և պտղաբուծության ԳՀԻ-ներում: Գիտական աշխատանքները նվիրված են խաղողի գենետիկայի և սելեկցիայի հարցերին: Խ. (Ս. Հ. Պողոսյանի հետ) ստեղծել է վաղահաս խաղողի 14 (Գուգարաց, Արթենիկ, Ուրարտու, Անուշ, Մուսկատ Սուսաննա, Ախթամար ևն) և սեղանի ու գինու խաղողի 27 սորտեր, որոնցից 9-ը շրջանացված են և ներդրված արտադրության մեջ: Արժեքավոր են Խ-ի աշխատանքները նաև սեղանի խաղողի միջահաս և ուշահաս, խոշորապտուղ, փոխադրունակ սորտերի ընտացման բնագավառում:

Երկ. Раннеспелость у винограда, Е., 1966.

ԽԱՉԱՏՐՅԱՆ Սուրեն Եղիայի [30.3(11.4).1889, Թիֆլիս —5.12.1934, Մոսկվա], հայ սովետական թատերական գործիչ, ռեժիսոր, մանկավարժ: Ա. *Խաչատրյանի* եղբայրը: 1916-ին ավարտել է Մոսկվայի համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետը: 1910—34-ին աշխատել է Մոսկվայի գեղարվեստական թատրոնում (ռեժիսորի օգնական, բեմադրական մասի վարիչ, ռեժիսոր): Միաժամանակ լինելով Ռուսաստանի լուսժողկոմատի թատերական բաժնի ազգային փոքրամասնությունների հանձնաժողովի նախագահ (1918—22), օգնել է Աստրախանում, Նոր Նախիջևանում, Կրասնոդարում և այլ քաղաքներում հայկ. թատերախմբերի կազմակերպմանը: 1921-ին Կրասնոդարում բեմադրել է Լ. Շանթի «Հին աստվածներ»-ը, 1931-ին՝ Ա. Լունաչարսկու և Ա. Դեյչի «Նապոլեոնի արշավանքը»՝ Լենինականի Մռավյանի անվ. թատրոնում: 1918-ին հիմնադրել է Մոսկվայի հայկ. պետական ստուդիան (տես *Թատերական ստուդիաներ*):

Գրկ. Сурен Хачатурян. Статьи, воспоминания, письма, документы, Е., 1969.

Բ. Հարությունյան

ԽԱՉԱՏՐՅԱՆ Վասիլ Հակոբի [30.9(12.10).1882, Ալեքսանդրապոլ (այժմ՝ Լենինական)—1937], Անդրկովկասի հեղափոխական շարժման մասնակից: Կոմկուսի անդամ 1900-ից: 1898-ից ընտանիքով տեղափոխվել է Թիֆլիս: 1904-ին բանտարկվել է անլեգալ գրականություն տարածելու համար: 1909-ին Թիֆլիսում բացել է դերձակի արհեստանոց, որը դարձել է բոլշևիկների գաղտնի հավաքատեղի: 1913-ին Ս. Սպանդարյանի, Ե. Ստասովայի հետ Խ. դատապարտվել է ցմահ աքսորի: 1917-ին Սիբիրից վերադարձել է Անդրկովկաս և հեղափոխական աշխատանքի ուղարկվել Ախալցխա: 1919-ին Ռոստովում հեղափոխական աշխատանք է ծավալել հայ գաղթականների շրջանում: 1920-ին ընտրվել է Ռոստովի քաղաքային կոմիտեի կազմում և Նոր Նախիջևանի հեղկոմի անդամ: 1921—37-ին կուսակցական-պետական աշխատանք է կատարել Հայաստանում, ապա՝ Վրաստանում:

ԽԱՉԱՏՐՅԱՆՑ Հակոբ Սամսոնի (1884, Երևան —1.11.1960, Երևան), հայ սովետական գրականագետ, թարգմանիչ: Ավարտել է Բաքվի գիմնազիան, Պետերբուրգի համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Լատիներեն և պատմություն է դասավանդել Նոր Նախիջևանի հայկական սեմինարիայում: 20-ական թթ. վերադարձել է Երևան, աշխատել որպես ՀՀԳ-ի դիրեկտոր: 1929-ին տեղափոխվել է Լենինգրադ, այնուհետև՝ Մոսկվա: 1939-ին Խ-ի թարգմանությամբ ռուս. լույս է տեսել «Հայկական հեքիաթներ» ժողովածուն, կնոջ՝ Մ. *Շահինյանի*, ընդարձակ առաջաբանով: Ռուս. է թարգմանել նաև Շիրվանզադեի, Թումանյանի, Իսահակյանի, Չարենցի մի շարք գործեր: Ուշագրավ է «Հայկական նովելներ»-ի ռուս. երկհատորյակը (1945—48), որն իր հերթին թարգմանվել է 14 լեզուներով: Խ-ի թարգմանությամբ ռուս. բեմադրվել են Շիրվանզադեի «Պատվի համար» և Պարոնյանի «Պաղտասար աղբար» պիեսները:

ԽԱՉԱՏՈՒՐ, Խաչատուր քարգործ (ծն. և մահ. թթ. անհտ.), X—XI դդ. հայ ճարտարապետ: Բազիլիկ հորինվածքը ձևափոխելով գմբեթավորի՝ հիմնովին վերակառուցել է Նորադուզ գյուղի (այժմ՝ Կամոյի շրջանում) հվ-արլ. եզրին կանգուն Ս. Լուսավորիչ եկեղեցին: Այն T-աձև հատակագծով գմբեթավոր փոքր դահլիճ է՝ ավագ խորանի երկու կողմերում ավանդատներով: Հուշարձանի բեմի կիսաշրջան պատի կենտրոնում ագուցված է ճարտարապետ Խ-ի անունը հիշատակող խաչքար:

Գրկ. Բարխուդարյան Ս., Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Ե., 1963:

Խաչատուր. Նորադուզի Ս. Լուսավորիչ եկեղեցին (X—XI դդ.)

ԽԱՉԱՏՈՒՐ (ծն. և մահ. թթ. անհտ.), հայ բանաստեղծ-ողբասաց: Ապրել և ստեղծագործել է XII դ. երկրորդ կեսին և XIII դ. սկզբին: Գործել է Կիլիկիայի Սկևռա վանքում, աշակերտել Ն. Լամբրոնացուն: Խ-ից պահպանված միակ գործը «Ողբք ի տէր Ներսէս արհիեպիսկոպոս Տարսոնի, ասացեալ Խաչատուր պաշտօնեի՝ նորին աշակերտի» (հրտ. «Բազմավէպ», 1874) խորագրով չափածո երգն է՝ գրված իր ուսուցչի՝ Լամբրոնացու մահվան (1198) անմիջական տպավորության տակ: Երգում Լամբրոնացին ներկայացված է որպես հոգևոր գործչի, գիտնական-մեկնիչի ու թարգմանչի կատարելատիպ: Ոճով, պատկերավորությամբ ու արտահայտչական ձևերով Խ-ի ողբը աղերսվում է ժող. բանահյուսության հետ:

Պ. Խաչատրյան

ԽԱՉԱՏՈՒՐ Բ ԵՐԱԺԻՇՏ, ճիշտը՝ Խաչատուր Բ Զեթունցի, Խաչիկ Ուլնեցի [մոտ 1499, գ. Ուլն (Զեյթունի գավառ)—4.2.1584, Սիս (Կիլիկիա)], Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս՝ 1560-ից: Օծվել է փետր. 16-ին: Ենթադրվում է, որ «Երաժիշտ» պատվանունն ստացել է ձայնային լավ տվյալներ ունենալու և հոգևոր-եկեղեցական երաժշտության վարպետ լինելու կամ Կիլիկիայում երաժշտական արվեստը հովանավորելու համար: Ծերության պատճառով մոտ 1581-ին իրեն փոխանորդ և հաջորդ է նշանակել *Ազարիա Զուղայեցի* (Ազարիա Ա Զուղայեցի) եպիսկոպոսին: Վերջինիս հետ 1582—83-ին տեսակցել է Կիլիկիայում Հռոմի պապի պատվիրակ Լեոնարդո Աբել եպիսկոպոսին և հավանաբար նրա միջոցով երկու թղթեր (պահպանվում են Վատիկանի դիվանում, տես «ՀԱ», 1892, № 8) ուղարկել Գրիգոր XIII պապին, որոնցով հռոմեական եկեղեցուն դավանական զիջումների ճանապարհով ցանկացել է ստանալ պապի օգնությունը կամ միջնորդությունը՝ Կիլիկիայում հայ ժողովրդի քաղ. կացությունը բարվոքելու համար: Սակայն պապը ոչ մի իրական քայլ չի ձեռնարկել: Խ. Բ Ե-ի մահից (թաղվել է Սսում) հետո գրագրությունները շարունակել է հաջորդը, բայց դարձյալ ապարդյուն:

Գրկ. Կյուլեսերյան Բ., Պատմություն կաթողիկոսաց Կիլիկիո, Անթիլիաս, 1939:

Զ. Հարությունյան

ԽԱՉԱՏՈՒՐ Գ ԳԱՂԱՏԱՑԻ, Մինտերճի [ծն. թ. անհտ., Գաղատ (Կ. Պոլսում)—մոտ 1679, Սիս (Կիլիկիա)], Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս՝ 1657—74-ին: Պատմագիտության մեջ անվանվել է նաև Սեբաստացի՝ սխալմամբ նույնացվելով ժամանակակից, Հալեպի հայոց թեմի առաջնորդ Խաչատուր վարդապետ Սեբաստացու հետ: Խ. Գ Գ. հայտնի է եղել «Մինտերճի» մականունով: Աշակերտել է Հովհաննես արքեպիսկոպոս Եդեսացուն և *Գալանոս Կղեմենտին* (1626-ից): Վարդապետ է ձեռնադրվել այրիանալուց հետո և հասել «ռաբունապետի» աստիճանի: Ուսուցիչների և Կիրակոս վարդապետ Արևելցու (Երևանցի, Կ. Պոլսի պատրիարք՝ 1641—42-ին) ջանքերով 30-ական թթ. ընկզբից ներգրավվել է ազգային-ազատագրական շարժման սսական հոսանքի մեջ՝ 50-ական թթ. դառնալով *սսականության*

Шнеерсон Г., Арам Хачатурян, М., 1958; Шостакович Д., Яркий талант, «Советская музыка», 1959, № 6; Тигранов Г., Балеты А. Хачатуряна, 2 изд., М., 1974; Карагюлян Э., Симфоническое творчество А. Хачатуряна, Е., 1961; Хубов Г., Арам Хачатурян, 2 изд., М., 1967; Чеботарян Г., Полифония в творчестве А. Хачатуряна, Е., 1969; Арам Хачатурян (Сб. сост. Г. Геодакян), Е., 1972; Тигранова И., Лирика в творчестве А. Хачатуряна, Е., 1973; Хараджанян Р., Фортепиянное творчество А. Хачатуряна, Е., 1973; Арам Ильич Хачатурян (Сб. сост. С. Рыбаковой), М., 1975. *Գ. Գյոդակյան*

Խ. Ա. Խաչատրյան

ԽԱՉԱՏՐՅԱՆ Էդուարդ Աբելի (2.6.1920, Թբիլիսի), հայ սովետական երկրաբան: Երկրաբանա-հանքաբանական գիտությունների դոկտոր (1970), պրոֆեսոր (1971): ՍՄԿԿ անդամ 1960-ից: Ավարտել է Թբիլիսիի համալսարանը (1941): 1943-ից աշխատում է ՀՍՍՀ ԳԱ երկրաբանական գիտությունների ինստ-ում. 1952—54-ին՝ գիտնական քարտուղար, 1957-ից՝ մետաղային օգտակար հանածոների բաժնի վարիչ: Խ-ի աշխատություններում լուսաբանված են ՀՍՍՀ մետաղային օգտակար հանածոների, հատկապես երկաթի և պղնձի հանքավայրերի առաջացման պայմանների և տեղաբաշխման օրինաչափությունների, հանքանյութերի միներալա-երկրաքիմիական հատկանիշների և դրանց օգտագործման հեռանկարների հարցերը:

ԽԱՉԱՏՐՅԱՆ Թորգոմ Թորոսի [ծն. 23.9(6.10).1908, գ. Շատևան, Կարսի նահանգ], հայ սովետական մեխանիկ: Տեխ. գիտ. դոկտոր (1947), պրոֆեսոր (1948): ՀՍՍՀ գիտության վաստ. գործիչ (1961): ՍՄԿԿ անդամ 1953-ից: Ավարտել է Երևանի Կ. Մարքսի անվ. պոլիտեխնիկական ինստ-ը (1932): 1939-ից նույն ինստ-ի տեսական մեխանիկայի ամբիոնի վարիչն է: 1954—59-ին եղել է Երևանի պոլիտեխնիկական ինստ-ի գիտական և ուսումնական գծով պրոռեկտորը: Աշխատանքները վերաբերում են առաձգական կոր ձողերի, սալերի ու թաղանթների հավասարակշռության, տատանումների և կայունության հարցերին:

Երկ. Пологие цилиндрические оболочки, Е., 1949 (Сообщения ин-та математики и механики АН Арм. ССР, в. 4).

ԽԱՉԱՏՐՅԱՆ Թուշիկ Կոստանդինի [10(23).8.1905, Բաքու —11.11.1978, Երևան], հայ սովետական օպերային երգչուհի (քնարական սոպրանո): ՀՍՍՀ ժող. արտիստուհի (1956): 1932-ին ավարտել է Երևանի կոնսերվատորիան (դասատու՝ Ն. Կարդյան): 1933—1958-ին աշխատել է Երևանի Ա. Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի թատրոնում: Դերերգերից են՝ Անուշ (Ա. Տիգրանյանի «Անուշ»), Ջիլդա (Վերդիի «Ռիգոլետտո»), Մարֆա (Ռիմսկի-Կորսակովի «Թագավորի հարսնացուն»), Անտոնիդա (Գլինկայի «Իվան Սուսանին»), Օլիմպիա (Չուխաճյանի «Արշակ Բ»):

ԽԱՉԱՏՐՅԱՆ Խորեն Արմենակի (16.3. 1923, Երևան —13.3.1977, Երևան), գյուղատնտեսության մեքենայացման բնագավառի գիտնական, ՀամԳԳԱ թղթ-անդամ (1967), Սովետական Միության հերոս (24.3.1945): ՍՄԿԿ անդամ 1944-ից: 409-րդ հրաձգային դիվիզիայի կազմում մասնակցել է Կուբանի, Ուկրաինայի, Ղրիմի, Լեհաստանի, Գերմանիայի ազատագրմանը: Եղել է հրաձգային դասակի, ապա՝ վաշտի հրամանատար: Հերոսի կոչման է արժանացել Սևաստոպոլի ազատագրման համար 1944-ի մայիսին մղված մարտերում կատարած սխրագործության համար: 1962—72-ին եղել է ՀՍՍՀ գյուղատնտեսության մինիստրության մեքենայացման ու էլեկտրիֆիկացման ԳՀԻ-ի դիրեկտոր, 1972-ից՝ Հայկական գյուղատնտեսական ինստ-ի գյուղատնտ. մեքենաների ամբիոնի վարիչ: Գիտական աշխատությունները նվիրված են լեռնային պայմաններում գյուղատնտ. մեքենաների օգտագործման հարցերին:

Երկ. Работа почвообрабатывающих орудий в условиях горного рельефа, Е., 1963; Работа сельскохозяйственных агрегатов на сильно пересеченной местности, Е., 1965; Вопросы механизации уборки и транспортировки плодов, Е., 1967; Сельскохозяйственные террасы (механизация строительства и использование), М., 1973; Стабильность работы почвообрабатывающих агрегатов, М., 1974.

ԽԱՉԱՏՐՅԱՆ Կարեն Սուրենի (ծն. 19.9. 1920, Մոսկվա), սովետական կոմպոզիտոր: ՌՍՖՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1971): Ա. Ե. *Խաչատրյանի* եղբորորդին: 1950-ին ավարտել է Մոսկվայի կոնսերվատորիայի ստեղծագործական բաժինը, 1952-ին՝ ասպիրանտուրան: Գրել է բալետ («Չիպոլինո», 1972, ՍՍՀՄ պետ. մրցանակ, 1976), օպերետ («Պարզ աղջիկը», բեմ.՝ 1959), օրատորիա («Պատմության մի ակնթարթ», 1971) ևն: Զանգիբարի (1964) և Սոմալիի (1972) պետ. հիմների հեղինակն է:

ԽԱՉԱՏՐՅԱՆ Հայկ Հարությունի [ծն. 15.12.1926, գ. Դահրավ (ԼՂԻՄ Ստեփանակերտի (այժմ՝ Ասկերանի) շրջանում)], հայ սովետական գրող: ՍՄԿԿ անդամ 1953-ից: Ավարտել է Երևանի համալսարանի բանասիրական ֆակուլտետը (1950): Եղել է Ղափանի ժողկրթբաժվար (1952—1954), Արմենպրեսի գլխավոր խմբագիր (1964—65), «Հայրենիքի ձայն» թերթի խմբագրի տեղակալ (1965—71): 1971-ից աշխատում է Հայկական սովետական հանրագիտարանի գլխ. խմբագրությունում 1976-ից՝ պատասխանատու քարտուղար-գլխավոր խմբագրի տեղակալ: Առաջին գիրքը («Տիգրան Մեծ») լույս է տեսել 1967-ին: Երևանի հիմնադրման 2750-ամյակին է նվիրված «Էրեբունի» վեպը (1968): Այնուհետև տպագրվել են «Տիգրան Մեծ» (Ա և Բ մասերը մեկ գրքով, 1972), «Արտավազդ» (1975) վեպերը, «Վանատուր» (1978) պատումաշարը: Գրել է նաև Հայաստանի սովետական գրողների միության «Գրական տեղեկատու» (1975) և «Հայկական օրացույցների և տարեցույցների մատենագիտություն. 1513—1973» (1976) գրքերը:

ԽԱՉԱՏՐՅԱՆ Մարլեն Նարիբեի [ծն. 2.9. 1926, գ. Ղուրդղուլաղ (այժմ՝ Բոլորաբերդ, ՀՍՍՀ Եղեգնաձորի շրջանում)], հայ սովետական ֆիզիկոս, ֆիզմաթ գիտ. դոկտոր (1970), պրոֆեսոր (1972): ՍՄԿԿ անդամ 1961-ից: Ավարտել է Մոսկվայի համալսարանը (1952): 1953-ից աշխատում է Դուբնայի միջուկային հետազոտությունների միացյալ ինստ-ում: Աշխատանքները վերաբերում են բարձր էներգիայի փորձարարական ֆիզիկայի բնագավառին: Առաջինն է չափել պրոտոնների, նեյտրոնների, միջուկների հետ նեյտրոնների (1—10 *ԳէՎ* էներգիայի) փոխազդեցության կտրվածքները:

ԽԱՉԱՏՐՅԱՆ Միխայիլ Արտավազդի [ծն. 27.11.1925, գ. Արփա (այժմ՝ Արենի, ՀՍՍՀ Եղեգնաձորի շրջանում)], հայ սովետական ինժեներ-մեխանիկ: ՍՄԿԿ անդամ 1948-ից: 1952-ին ավարտել է Թբիլիսիի երկաթուղային տրանսպորտի ինժեներների ինստ-ը: 1956-ից աշխատում է Երևանի մաթ. մեքենաների ԳՀԻ-ում, որպես առաջատար ինժեներ-կոնստրուկտոր: 1964-ից «Նաիրի» էլեկտրոնային հաշվողական մեքենաների գլխավոր կոնստրուկտորի տեղակալն է: «Նաիրի» էլեկտրոնային հաշվողական մեքենաների ընտանիքի նախագծման և սերիական արտադրության կազմակերպման աշխատանքներին մասնակցելու համար 1971-ին արժանացել է ՍՍՀՄ պետ. մրցանակի:

ԽԱՉԱՏՐՅԱՆ Ռոբերտ Հրաչյայի (ծն. 8.6. 1921, Թիֆլիս), սովետական կուսակցական և պետական աշխատող: Պատմական գիտությունների թեկնածու (1964): ՍՄԿԿ անդամ 1945-ից: Ավարտել է Ադրբեջանի համալսարանի պատմության ֆակուլտետը (1946): 1941—45-ին ծառայել է սովետական բանակում: 1947-ից աշխատել է ՀԿԿ ԿԿ-ում: 1954—64-ին եղել է ՀԿԿ ԿԿ-ի գիտության և կուլտուրայի բաժնի վարիչ, 1964—66-ին՝ ՀՍՍՀ կուլտուրայի մինիստր, 1966—73-ին՝ ՀԿԿ ԿԿ-ի քարտուղար և բյուրոյի անդամ: 1974-ից անցել է գիտական աշխատանքի: 1947—1957-ին միաժամանակ դասախոսել է Երևանի համալսարանում: Խ. եղել է ՀՍՍՀ IV—VIII գումարումների Գերագույն սովետի դեպուտատ, ՀԿԿ ԿԿ-ի (1954—76) անդամ: Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի՝ 2, «Պատվո նշան», Կիրիլի և Մեթոդիի I աստիճանի (Բուլղարիա) շքանշաններով: Հեղինակ է «Արտաշահմանի հայ կոմունիստական մամուլի պատմությունից» (1965) աշխատության:

ԽԱՉԱՏՐՅԱՆ Ռուդոլֆ Լորիսի (ծն. 4.3. 1937, Երևան), հայ սովետական նկարիչ: ՀՍՍՀ վաստակավոր նկարիչ (1977): Աշխատում է գրաֆիկայի և գեղանկարչության ասպարեզում: 1971-ից ապրում և ստեղծագործում է Մոսկվայում: 1959-ին Երիտասարդության համաշխարհային VII փառատոնի (Վիեննա) ցուցահանդեսում «Ուսանողուհու դիմանկար»-ի համար արժանացել է բրոնզե մեդալի, 1970-ին՝ Կոմիտասի ծննդյան 100-ամյակին նվիր-